# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սեպտեմբերի 11-ին՝ Խաչվերացի տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Հայ Եկեղեցու հնավանդ կանոնների համաձայն, նախորդ օրը խարտավիլակ Տ. Մուշեղ աբեղա Բաբայանի վկայությամբ կատարվեց քահանայացուների ընծայման հանդիսավոր արարողությունը:

Հաջորդ օրը, հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի և Շվեդիո Հայրապետական Պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, Հայ Եկեղեցու նվիրապետական աստիճանի՝ քահանայության արժանացան նախկին ճեմարանավարտներ Վազգեն սրկ. Քեսաբլյանը, Մանուկ սրկ. Ղալաչյանը, Դավիթ սրկ. Միքայելյանը, Գոռ սրկ. Գրիգորյանը, Անդրանիկ սրկ. Հակոբյանը և քահանայից լսարանն ավարտած Արմեն սրկ. Մկրտչյանն ու Վարդան սրկ. Ավետիսյանը: Ձեռնադրող Սրբազան Հայրն ընծայացուներին համապատասխանաբար վերանվանեց. Վազգեն սրկ.՝ Տ. Խաչատուր, Մանուկ սրկ.՝ Տ. Սեբեոս, Դավիթ սրկ.՝ Տ. Դերենիկ, Գոռ սրկ.՝ Տ. Գրիգոր, Անդրանիկ սրկ.՝ Տ. Մաշտոց, Արմեն սրկ.՝ Տ. Մեսրոպ, և Վարդան սրկ.՝ Տ. Ստեփաննոս: Հավարտ ձեռնադրության Սրբազան Հայրը նորընծաներին պատգամեց.

«Միայն ծիսակատարություն չէ, սիրելինե՛րս, քահանայությունը, և այս խոսքս կուզեմ ուղղել նորաօծ մեր Քահանա Հայրերին: Շատ կարևոր է պաշտամունքը, շատ կարևոր են Սուրբ Խորհուրդները, բայց միայն այդ չէ քահանայի պաշտոնը. նույնքան սուրբ է Ավետարանի խոսքը: Մենք և՛ խորհրդակատարության ծառաներն ենք, և՛ սուրբ խոսքի: Սուրբ խոսքը սուրբ և ճշմարիտ դավանությամբ ժողովրդին պիտի բացատրենք, ժողովրդի սրտի մեջ պիտի դրոշմենք» (տե՛ս էջ 21):

Նույն օրը Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում, ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանի, դպրության և սարկավագության աստիճաններ շնորհվեցին քահանայից լսարանն ավարտած տասը սաների:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



«ՀՐԱԺԱՐՈՒՄՆ»



ՆՈՐԱՕԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ Է ԴԻՄՈՒՄ ՁԵՌՆԱԴՐՈՂ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ՝
Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ